

Խոժքերով և որանց հետ միացած մտնում ուխտատեղին համբուրում, ուխտ անում, վերադառնում, կրկին սփռոյները սփռում, «մատադր-ը», արինոտ խորովածի հետ ուտում, մի լաւ կոնծում, երգում, պարում և շտապով վերադառնում տուն, ճանապարհին մի երկու տեղ կրկին հաց ուտելով, թէյ խմելով ու շարունակ կոնծելով։

Մինչև կէս օր բոլոր ուխտաւորներն արգլն քաշուած են լինում, մնում են միայն քահանաները, որ իրենց ստացած մատազայտների մորթիներն ու էրիները (աչ ոտը) քարձում են ձիերի վրայ կամ տեղն ու տեղը ծախում և վերադառնում։

### ԿԱԽԱՐԴՈՒԹԻՒՆ

Կախարդութիւնը լուռում ես բաւական տարածուած է, այստեղ էլ դրանով պարապում են թէ տղամարդիկ և թէ կանաքը։ Տղամարդիկ գործում են առաւելապէս «Պեցհազարեայ» «Ախթարը», «Հաւախօս» և այլ ձեռագիր գրքերի ցուցմունքով, ուստի և սրանց մասին մենք մտնրամասն կը խօսենք, երբ բազդ կունենանք շատ զաւաքներից կախարդութեան վերաբերեալ նիւթեր հաւաքելուց յետոյ այդ արուեստի զարդացման մասին մի ընդհանուր տեսութիւն անել, քննելով նաև վերոյիշեալ ձեռագիրները։

Կանանց մէջ տարածուած կախարդութիւնը աւելի ըսկդրնական և աւելի ընդհանրացած է, նա յաջորդաբար աւանդուել է առանց զրաւոր մի յիշատակարանի և սրա մէջ պահպանուած են նախնի դրեթէ բոլոր տեսակի հմայութիւնների (օրնիօմանտիա, օրուֆոմանցիա), մեռելահմայութեան (Necromancie) մնացորդները։

Հաւահմայութիւն. — Թռչուններից ծիծեռնակը, աղաւնին, կաշազակին ընդհանրատէս համարում են բարեզուշակ, իսկ բուն, ազուալը՝ շարապուշակ։ Բացի սրանից՝ գուշակութիւններ են անում նայելով թռչունների ա) զանուած տնղին, բ) հանած ձայնին և զ) կատարած գրդադաւթեան։ Այսպէս՝

**ՏԵՂԾ.**—Երբ աքաղաղը կտրանն է կանչում, գուշակում են, որ հիւր է գալու, երբ հաւը թառի վրայից է կանչում՝ իսկոյն բռնում են և տան հերթիկից վայր ձգում, եթէ դէսի անկիւնը զնայ՝ լաւ նշան են համարում և կուտ տալիս, իսկ եթէ դէսի գուլը՝ վատ և անմիջապէս մորթում են:

**ԶԱՅՆԾ.**—Եթէ կաշաղակը կանչէ՝ հիւր կը գայ. եթէ բռն բռւայ մի տան վրայ, այդտեղ բնակուողներից մինը կը մեռնի. եթէ ագռաւը կուտէ՝ անձրե կը գայ, իսկ եթէ զայ անէ՝ մի անասուն կը սատակի, որ նա ուտէ. դրա համար էլ զիւդացիները այդպիսի ձայն լսելիս ասում են. «Դրուխոդ ուտեսու:

**ԳՈՐԾՈՂՈՒԹԻՄԾ.**—Եթէ կաշաղակը կոկուալիս երեսը դարձընէ դէսի մի տուն՝ գուշակում են, որ այդ տնեցիները լաւ՝ իսկ եթէ պրծը զարձնէ՝ վատ համրաւ են առնելու. Եթէ մարտի իննին արագիլը վերադառնալիս կտցում մի որեւէ որդի կտոր ունենայ բռնած՝ պատերազմ, կտորած է լինելու, իսկ եթէ հացարոյս ունենայ բերանում՝ հացահատիկների և պրտուլների առատութիւն պիտի լինի.

**ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ** միջոցով գուշակութիւն. —Թուշունների նման՝ վայրի կենդանիներից միջանիսը բարեգուշակ, միջանիսն էլ շարագուշակ են համարում. —այսպէս, օրինակ, աղուէսը բարեգուշակ է, և այս է պատճառը, որ հարսանիքի ժամանակ հարոց թափառորի տանը մերձենելու համրաւը տանող անձնաւորութեան աղուէս են կոչում, կամենալով «բարեգուշակ» զագափարը արտայայտել:

**Սակայն** աղուէսը միշտ էլ բարեգուշակ չէ, եթէ նա անցնի մարդկանց միջով, սրանից, գուշակում են, որ զրանց միջ կուր է ծագելու, ուռտի և շատ անդամ ասում են. «Սրանց միջով աղուէս է անցել», կամենալով յայանել, որ նրանք միմեանց հետ կուտել են:

Իսկ նապաստակը շարագուշակ է համարում. գիւղացին գիւղից գուրս գալիս եթէ նապաստակի է հանդիպում, շատ անդամ յետ է դառնում, գուշակիլով՝ որ այդ օրուայ մտադրութիւնը շղիտի յաջողուի:

**Ընտանի** կենդանիներից՝ երբ շունը ոռնում է՝ գուշակում

են, որ տնեցիներից մինը մեռնելու է։ Երբ կատուն հիւանդի վրայ է նստում, ասում են, թէ վերջինս առողջանալու է։ Երբ ձին շրի մէջ միզում է՝ գուշակում են, որ մի մեծ դժբաղդութիւն է պատահելու, և երբ կողի պոտուկն է կուրանում, մեղադրում են նրան կժողով հարսին անառակութեան մէջ։

*Մարդկանց միջոցով գուշակութիւն։—Մարդկանցից կոյրը, կաղը և զոշը չարազուշակ են համարւում, ինչպէս և քահանան, երբ մի գործի, ճանապարհ զնալիս քահանայի են հանդիպում, կամ յիտ են դառնում և կամ թքում են և ձեռքը ամորձափին քսում, որպէսզի «չարը խափանի»։*

*Մարդու թնազդական շարժումների միջոցով գուշակութիւն։—Եթէ աջ աշըր խաղայ՝ ուրախալի, իսկ եթէ ձախը՝ տիրալի բան է պատահելու։*

*Եթէ քիթը քոր գայ՝ հիւր է զալու։*

*Եթէ ականջը կանչէ՝ տոել է մինը յիշել է, և որպէսզի գուշակին թէ ոզ է եղել, անուններ են տալիս, ում անուան վրայ որ կանչը զադարի՝ տոել է նա է յիշել։*

*Եթէ աջ ականջը քոր գայ՝ անձրե է զալու, իսկ եթէ ձախը քոր գայ՝ արե ոլիտի անի։*

*Եթէ աջ ձեռքը քոր գայ՝ փող է ստանալու, իսկ եթէ ձախը քոր գայ՝ ծախսելու է։*

*Եթէ աջ ստը քոր գայ՝ յաջուղակ ճանապարհ պիտի զնայ, իսկ եթէ ձախը քոր գայ՝ ձախսորդ ճանապարհ է զնալու։*

*Եթէ զոյլ փըսնշայ՝ յաջուղութիւն, իսկ եթէ կենս՝ ձախորդութիւն է պատահելու։*

*Անշունչ առարկաների միջոցով գուշակութիւն։—ա.՝ բայսուր. Սիրի-սիրի կոչուած հռատերն ըստի խրաբան-շիւր տերեր մի անձի յատկացնելով հարցնում են մի անտեղակ մարդու, թէ մտադրուած անձնաւորութիւնը (աղջիկը կամ տղան) սիրի-սիրի ճւմ սիրի։ Այս անտեղեակ անձը ըրանում է տերներից մինը, որից և գուշակում են, թէ մտադրուած անձնաւորութիւնը սիրում է այն անձին, որին յատկացրուած էր այդ տերեր։*

*Գարի ցցել — Երեք, հինգ, կամ եօթը զարի վերցնելով*

նշաններ են անում մինի ծայրը կտրելով, միւսը կիսելով, երբորդը փռքը ինչ ճեղքելով և այլն ու իւրաքանչիւրը մի քանի՛ օրինակ սրբի, բազգի, կորստի, տպայի, աղջկայ նշան համարում։ Յետոյ բոլորը միասին լցնելով ձախ բռի մէջ, աջով ծածկում են և երեք անգամ թափ տալիո։ Ըստա աջ ձեռքը վերցնում են և նայելով զարիների դասաւորութիւնն՝ գուշակութիւններ անում։ Եյս միջոցով գուշակում են, թէ հիւանդութիւնը որ սրբից է, թէ յզի կինը տղայ թէ աղջկի է ծնելու, թէ կորուստը գոնուելու է, թէ ոչ, թէ կասկածելի անձնաւորութիւններից մըն է գողը, թէ հարսնացու աղջկներից որի՞ հետ վերջիվերջոյ նշանագրուելու են և այլն։

*Մաղ պտուել.*—Եյս կերպավ գուշակում են, թէ մինի հիւանդութիւնը որ սուրբն է տուել, թէ կործողութիւնը պարզ է, սակայն ամէն կին չի կարող կատարել, պէտք է, որ այդ անելու շնորհը մի որեէ սրբից ստացած լինի երազում։ Եյսպիսի կանայք կան զրեթէ բոլոր գիւղերում, և ամէնքին էլ յայտնի են։ Հիւանդի տէրը մի քանի ձև, մի երկու մոմ առած գալիս է այդպիսի մի կնոջ մօտ և նկարագրելով իւր հիւանդի պրութիւնը, խնդրում գուշակել՝ թէ որ խաչից է։ Մաղ պլատեցնողը վերցնում է մաղը, որի խեմի (շրջանակի) վրայ ցըցած է լինում ձիու պայտի երկու ականջաւոր մի մեխ։ Թէ պլատեցնողը և թէ խնդրովը իրենց աջ ձեռքերի ցուցամատերն անցկացնելով մեխի ականջների տակ՝ պահում են մաղը կախուած զրութեամբ։ Ըստ պլատեցնողը ասում է. «Եթէ այսինչի հիւանդութիւնը խաչից է՝ մաղը աջ պտտուի, եթէ ոչ՝ ձախ։ Եթէ ձախ է պտտում, ասում է, թէ հիւանդութիւնը խաչից չէ, թող դեղ անէ՝ կըլաւանայ, իսկ եթէ աջ է պլատեւում՝ հաստատում է, որ խաչիցն է և յետոյ կամնալով գուշակել թէ որ խաչիցն է, շարունակում է. թէ այս ինչ խաչիցն է՝ աջ պտտուի, թէ չէ՝ ձախ։ Եյս կերպ գտնելով նաև թէ որ խաչիցն է՝ պտտուէրներ է տալիս, թէ մուռով, մատադով պէտք է գնալ այդ խաչի գուռը՝ նրա ցասումը շիջուցանելու և նա կը բժշկէ հիւանդին։

*Բ. Կըակով.*—Երբ փայտը այրուելիս ձայն է հանում,



զուշակում են, որ իրենց մասին խօսող կայ և որպէսզի իժտնան, թէ ոչ է, ոկտում են անուններ տալ, ում անուան վրայ որ դադարի փայտի հանած ձայնը, նաև է խօսողը,

Տեսանընդառաջին վառուած խարոյիի ծուխը որ կողմը որ ուղղուի՞ այն կողմի արտերը լաւ հունձ կըտան:

Մատաղի համար վառուած կրակը եթէ լաւ վառուի՞ մատաղն ընդունելի կրինի:

գ. Քաջերով.—Սովորաբար ուխտատեղիներում երբ ցանկանում են իժանալ, թէ իրենց ուխտը կատարուելու է, թէ ոչ և կամ իրենց մատաղն ընդունելի եղաւ, թէ ոչ, վերցնում են մանր քարեր և քսում խաշքարի կամ եկեղեցու քեմի, պատի վրայ, եթէ կոշտում է՝ ուրեմն կատարուելու է, ընդունելի է, իսկ եթէ չի կոշտում, առել է չի կատարուելու, մատաղն ընդունելի չն \*):

դ. Զօրով.—Եյս միջոցով զուշակութիւններ անելու ամենալաւ ձեզ «վիճակն» է, որ հանում են համբարձման տօնին և որ ես ամենայն մանրամասնութեամբ նկարտղըն եմ տօների բաժնում: Բացի սրանից՝ այս գաւառում ես տարածուած է փիլթա և մկրատ դնելը, որ դարձեալ կատարուեմ է զրի միջոցով:

Փիլթա-զնել:—Այս կերպով տռաւելապէս զուշակում են, թէ հիւանդն որ սրբի ցաման պատճառով մահին է ընկել: Դուլպայի ճաղերի վրայ փաթաթում են մօտ երկու վերշոկ երկրութեան երկու տակ արած բամբակի, որ «փիլթա» է կոշտում և իւրաքանչիւրը մի սրբի յատկացնելով դնում կիսից հետ ջուր ածած գաւաթի կամ մի ուրիշ ամանի վրայ, և նախ մաղով ու ապա սփռոցով ծածկում: Քառորդ ժամից յիտոյ սփռոցն ու մաղը վերցնում են և եթէ փիլթաներից մինը կամ բացուած լինի և կամ երկու ծայրերից բռնած արձակե-

\*). Քարով զուշակելու մի ուրիշ ձև կայ Գանձակի գաւառում եւաչ քցի անունով (առև իմ Գանձակի գաւառը, Բ. երես 143). և Զանգեղուրի գաւառի Մեղրի զիւղում: (առև իմ Զանգեղուրի գաւառը, Ե. հատորում, որ շուտով լոյս կըտեսնի):

լիս ճաղը բամբակի միջից դուրս գայ<sup>1)</sup>։ այդ նշան է, որ հիւանդութիւնը այն սրբիցն է, որին յատկացրուած էր այդ փիլթան Եթէ ոչ մինը արձակուած չլինի, գուշակում են, որ «սրբից չէ», և կամ ենթադրելով, որ ուրիշ սրբերից կարող է լինել, կրինում են՝ այլ սրբերի յատկացնելով փիլթաները։

Մ'զրատ կամ՝ դանակ դնելու։—Այս միջոցով էլ գուշակում են, թէ հիւանդութիւնն որ սրբի տուածն է։ Մ'կանի մկրտ կամ դանակ զանազան սրբերի յատկացնելով գնում են զրի մէջ, գիշերն այդպէս թողնում եւ առաւտեան նայում, թէ նրանցից որն է ժանգոտել։ Հիւանդութիւնն այն սրբիցն է լինում որին յատկացրուած էր այդ ժանդոտած մկրտ կամ դանակը։

Կուռը շափելու։—Սա էլ սրբի պարզն է համարւում և միայն նա է այդ անում, ով երազում մի որեւէ սրբից ստացել է այդ շնորհը։ Այս կերպ գուշակում են, թէ արդեօք մինի հիւանդութիւնը սրբի և յատկապիս որից ցասման հետևանք է։ Չափողը սովորում է իւր ձախ բազուկը մինչն արմունկը, տպա աջ գաստակավ շափում է երկու թիղ, սկսելով ձախ ձեռքի միջամատից և ապա նորից շափում, սկսելով երկրորդ թիղի յանկած կէտաից։ Եթէ այս անզամ շափելիս աջ ձեռքն աւելի է պարզում և թիզը երկարում է՝ դրական գուշակութիւնն են անում, իսկ եթէ կուչ է գալիս և թիզը փոքրանում՝ բացառական։

Կարկտագիր։—Դանձակի գտւառի նման Լօռին ևս ունի մի քանի տիրացուներ, որոնք կարկտագիր անելով ապահովացնում են գիւղացիների արտերն ու այգիները կարկտից։

Այս տիրացուներից ամենահաշակաւորը գսեղեցի Դրիգորն է։ Սա երբ լաւ վարձատրուելով կամնում է, որ իւր կարկտագիրը սաստիկ զօրաւոր լինի, զրում է Աւագ Հինդշարիթի օրը, եկեղեցու խորանում, երբ քահանան վերաբերումն է

<sup>1)</sup> Երբ ճաղը դնում են բամբակի մէջ և երկու ծայրերը միացնելով վաթաթում վերան, երբ եմն մի ծայրը միւսից կարճ են թողնում, այնպէս որ վաթաթելիս՝ ճաղը կարճ ծայրից դուրս է գալիս։



կատարում, միայն թէ նախորդ օրը ուժի կանոն սաղմաս պիտի քաղած լինի։ Եւ նրա զրածը այս է.

Յորժամ երթայր Տէրն մեր Յիսուս Քրիստոս յՆրուսաղէմ, հարցին նմա սուրբ առարեալքն՝ Յորժամ ելանիցէ ամպ քարկութեան կարկտին զինչ արասցուք։ Պատասխանի ետ Տէրն մեր Յիսուս Քրիստոս։ «Ասեցէք անունը այսորիկ, որք են. Ենոք, Եղիա, Ռասին, Ռասուտ, Սորէլ և Տրբէլ, գուք տարէք հնացուցէք զամպ կարկտին հանդից, հանդաստանից, ծառոց և անկոց ի տեղւոյս, ամէն»։

Հորս կտօր թղթերի վրայ այս միենոյնը արտապրելուց յետոյ նոյն խորանում վերցնում է նախ Ս. Յովհաննու Աւետարանը և ապա Ս. Գրիգոր Նարեկացու աղօթագիրը և սրանց ԺԲ. գլուխները կարգում այդ թերթիկների վրայ և յետոյ ինըն իրեն անդաստան կատարում. Յետոյ այդ թղթերը տանում է տուն և մի մաքուր տեղ պահում. ինքն էլ 40 օր ողջախոհութեամբ է անցկացնում։

Համբարձման օրը, այդ թղթերը ծոցում դրած ներկայ է լինում պատարագին, որից յետոյ ամէն մինը տալիս է մի երիտասարդի, որ տանի գիւղի մի անկիւնում, երկու քարերի մէջ, մի շոր տեղ թաղի. Կարկուտն այդ թղթերի սահմանից ներս չի կարող անցնիլ։

Երազատեսութեան։—Լոյին ունի նաև երազատեսներ, որոնք խնդրատուների յանձնարարութեամբ քնում են և երազում տեսնում, թէ մինի հիւանդութիւնը թիւ սորից է յառաջացել, կամ կորած անառունը մրտել է, և կամ զողացուած իրը ում մօտ է. Այսպիսի երազատեսներից նշտեալոր է եղել զանգեցի չուպին, որի սրբատուր չնորհ փոխանցել է նրա եղրօր կին՝ նղոփին, որին այժմ էլ զիմում են շատ շատերը։

Վախ շափել. —Երբ ցանկանում են իմանալ, թէ մինի հիւանդութիւնը վախենալուց է յառաջացել, զիմում են վախ շափող կանանց, որոնց մի որևէ սուրբ պարզնել է այդ իմանալու չնորհը. Վախ շափող կինը մի քանի անգամ երեսը խաշտէնքելով քանդում է իւր զափին, մի ծայրը տալիս հիւանդի ձեռքը, միւս ծայրից ինքը ձախ ձեռքով քռնում և ովախի

աղօթքներից» մինը շշնջալով՝ աչ ձեռի արմունկիր դնում բրանած տեղին և դաստակը աչ ու ձախ դարձնելով մեկնում գոտու վրայ. ապա ձախ ճեռով՝ առանց գոտու բռնած տեղը թողնելու՝ առաջ է բերում և բռնում գոտու այն տեղից, որ հասել էր աչ ձեռի ցուցամատը և այս կերպ մի կանգուն հս շափելով՝ հիւանդին բռնել է տախս երկրորդ կանգունի յանկած տեղից. Սպա բաց է թողնում առաջի կանգունը շափելուց յետոյ բռնած տեղը և կրկին երկու կանգուն շափում, եթէ այս անգամ «ձեռքը երկարանալով» անցնում է հիւանդի բրանած տեղից, առել է հիւանդը վախեցել է և այլքոն սաստիկ՝ որքան աւելի երկարանում է ձեռքը. իսկ եթէ «ձեռքը կուճ զալով» չի հանում բռնած տեղին, նշան է, որ հիւանդութիւնը վախեց չէ յառաջցել.

Յետոյ վախեցած ին աղօթում են այսպէս՝ վերցնում են նրա մօր գոտին, վախսի աղօթքը երեք անգամ ասում, իրացանշիւր անգամին մի հանգոյց ձգելով գոտու վրայ և զիշերը դնում վախեցածի գլխի տակի.

**Ահա այդ աղօթքները.**

**Վախ շափելու.**

Հրէս էկաւ երեք ձիւուր, ոնց ըն զոյ մն Մինը Յիսուսը,  
Մինը Քրիստոսը,  
Մինը Մարիամ Աստուածածինը,  
Թամքեց ոն ձին,  
Հաքաւ ոն շորը,  
Սարի էս կանովը վէր էլու, էն կանով նոյլ  
էն կանովը վէր էկաւ, թուշ հաքաւ ու ոն  
Դուշտանի աչքը հանեց<sup>1)</sup>։

**Վախը բռնելու.**

Դեղին ծաղիկ,

Դեղնածաղիկ,

Մէրը քաղեց,

Դուստրը փնջեց,

<sup>1)</sup> Յ անգամ են ասում, միւս անգամներին «կարմիր, սպիտակ» ածականներն են առաջ ձիւուն և շորին։

**ՀԵՐԵ ԱՆՁԻԵց,**  
Որդին գնջեց.  
Եւաւ սարին,  
Թոթոթը բարին,  
Հաւն և թառին,  
Կողն ա կապին.  
Այս սիրտ, տեղու-

Չար աշք.—Լոռեցիներն էլ հաւատում են, որ մի քանի, մանաւանդ չէի, մարդիկ շար աշք ունին և ինչի, ում որ հաւանին՝ աշքով կը տան, —իրը կը խարի, իսկ մարդը կամ անտառունը կը հիւանդանան, զլինները կը ցարին, կը ակսին սաստիկ յօրանջել։ Չար աշք ունեցաղները շատ անգամ յայտնի են լինում, և մարդիկ զգուշանում են նրանցից, այսպէս, օրինակ, երբ զրանք մինի տանից դուրս են զայխս, տնեցիներն օշախի մոխրից վերցնում են և զրանց յետերից փշում տաելով. «Բու շար աշքը քի հետ տար», որպէսզի եթէ նոյնիսկ աշք տուած լինի՝ անցնի:

Եւ որոշնետն առաւելապէս երեխաներին են աշք տալիս, ուստի և հսկատար մայրերը բախի ծառուց փոքրիկ կուժ են շինում և օրօրոցից կախում, որպէսզի եթէ աշք տան, այդ կուժը արաքուի և երեխան աղատուի, և կամ մի քիչ խոզի մազ, մի կոտրած տսեղ և մի քիչ մոխրի են ածում մի փոքրիկ տոպրակի մէջ և կախում երեխաների վզից. Ռմանք էլ եօթը հատ աշքահլունք (զունաւոր հլուններ) 4 կնոջ և 3 աղամարդի ազօթել են տալիս և կարում երեխաների թիկունքին. Թէ այս հուլունքները և թէ առհասարակ աշք տուածներին ազօթելիս՝ վերցնում են մի տսեղ կամ մի զրչահատ, և ազ ու հաց, շարունակ յօրանջելով շնչում են չար-աշքի մի ազօթք, թիթեսութեամբ թքում հիւանդի զլիսին թիւն, թիւն, թիւն, անելով, և վերջը ազ ու հացը երկը անգամ պտտեցնելով հիւանդի զլիսով, տալիս են, որ առն շանը, որպէսզի «շար նիւաթը» շանը անցնի.

Չար աշքի ազօթքներ շատ կան, և շատ շտաերը դիտեն, թէ տղամարդիկ և թէ կանայք, մանաւանդ պառաւներ. Թէ այս և թէ, միւս, կախարդական ազօթքներն ամէն մարդ կա-

բող է սովորել և գործադրել, սրանց համար հարկաւոր չէ երազում մի որևէ է սրբից չնորհ ստանալ, ինչպիսին հարկաւոր է փիլթա թափելու, վախ շափելու, մաղ դնելու համար. այստեղ միմիայն պէտք է որ սովորեցնովն ու սովորողը տարբեր սեռի լինեն, ապա թէ, ոչ երկուսի աղօթքն էլ չեն ևկտրիլ — աղղեցութիւն չեն ունենալ. Ահա այդ աղօթքներից մի բանիսը.

## Ա.

Չար աչքը,  
Չար սահմաթը,  
Հոգելոր պառաւը  
Հանէ չար աչքը,  
Մաղի պէս մաղէ,  
Եղի պէս պարզացնէ,  
Աղի պէս հալէ,  
Մոմի պէս սասցնէ,  
Իժի պէս ծըկըկացնէ,  
Ուլի պէս մըկըկացնէ,  
Օցի պէս սըկըկացնէ:

## Բ.

Չար աչք, չար նիսթ,  
Չար սահմաթ,  
Սև սարի տակին,  
Սև քարի տակին,  
Օձի պէս սողէր,  
Ռւռի պէս դողէր,  
Ֆողի պէս մաղուէր,  
Խախտի պէս ծէկծուէր,  
Թէ մարդ ու մերուքը վէր գայ,

## Գ.

Ով աչքը ըչքահարէ,  
Քրիստոսը նրա աչքը հանէ,  
Կոպիտ եղը լձեցի,  
Կապիտ կովը կթեցի,

Կապիտ մածուն հանեցի,  
 Կապիտ խնոցի հարեցի,  
 Կապիտ կարագ հանեցի,  
 Կապիտ մարդ, կապիտ կնիկ,  
 Թէ մարդ ա աչք տուել՝  
 Աչքը զուս զայ,  
 Թէ կնիկ ա աչք տուել՝  
 Տաւլը (ծամը) վէր զայ:

Պ.

Աչքը բչեալրի,  
 Թրիստոսը մտնահարի,  
 Ուռի պէս զողայ,  
 Օձի պէս սողայ,  
 Մաղով մազուի,  
 Ետարարով շատարարուի,  
 Խըխալով խըխալուի,  
 Գոմշի պէս տըռնգայ,  
 Ազի պէս հալուի,  
 Տւարի պէս բանչայ,  
 Գորդան պէս ճռնչայ,  
 Թէ կնիկ ա, ճաւլը վէր զայ,  
 Թէ տղամարդ ա, միրուքը պաճակուի:

Ծ.

Զար աչքը,  
 Զար չարաբանի,  
 Քանց շունը կատաղած,  
 Քանց զետը վարար:  
 Պիղծ ժւր եւ զնում,  
 Պիղծ պիղծ անելով,  
 Կով կով անելով,  
 Եղ եղ անելով,  
 Սև սարըմը մե շոր կայ,  
 Սև ձօրըմը մե ֆոր կայ,  
 Սև փորըմը մե օձ կայ,  
 Միսը կէ, արինը խմի,  
 Յիսուս Թրիստոս:

Զ.

Թրիստոսի ութը մատնով երկու բթով,  
 Զար աչքը արընի,  
 Զար միաքը կործանի:  
 Աստուածածնի քաղցր կախով  
 Զար աչքը արընի,  
 Զար միաքը կործանի:  
 Սուրբ Սարգսին ձիու ձարով  
 Զար աչքը արընի,  
 Զար միաքը կործանի:  
 Աստուածածինը նստել ա մարմար քարին՝  
 Ազօթում ա էս հիւանդին,  
 Զար աչքը արընի,  
 Զար միաքը կործանի:  
 Յոնան մարգարէն ձկան փորումը ազօթեց,  
 Սև օձը սև սարի տակին կնքուեց մկրտուեց.  
 Զար աչքը արընի,  
 Զար միաքը կործանի:

Է.

Պատուեց սև լեռը,  
 Դուրս եկաւ սև ձին,  
 Դուրս եկաւ սև մարզը,  
 Դուրս եկաւ սև օձը.  
 Սև օձի մի աչքը ջուր էր,  
 Միւս աչքը կրակ էր,  
 Բույս աշքաւորի,  
 Եէկ աշքաւորի,  
 Կանանչ աշքաւորի,  
 Կապուտ աշքաւորի,  
 Զար աչքը արագի:

Ը.

Շագելոյս ասաւ,  
 Շէնաւրիս ասաւ,  
 Գարելիս ասաւ,  
 Ուլիս ասաւ,  
 Ուլամանիս ասաւ,

Թաւիս ասաւ,  
Թաւլամանիս ասաւ,  
Ես կուռը յուր,  
Ես կուռը յուր,  
Մէջը կապ ու կշկուռ,  
Զար աչքը ճաքի,  
Պատով տամ պատահաբուի,  
Օձի պէս սողայ,  
Մկան պէս դոդայ,  
Աստուած քե պահի, պահպահի,  
Զարը քե չը մօտենայ.

## Ասում են 7 անգամ:

թ.

Զար աչքին՝ չոր փչակին,  
Բար ու քացախ բերանին,  
Զէն ուսէր, զէն տանէր,  
Զէն տանէր տէր իւր զոխերին,

Աշքի հատ.—Երբ մինի աշքի մէջ բրնձի մեծութեան ըծեր (հատ) են զոյանում, պառաւ կանանց աղօթել են տալիս, որ անցնի. Սրանը ջրով լի մի աման բռնում են այդպի-սի հիւանդութիւն ունեցողի աշքի առաջ, և զլիսի վերայից 7 հատ բրինձ մի մի ձգում են զրի մէջ, ամէն անգամին հետեւալ աղօթքը լրկնելով.

Մէր տան եղի կռնէն մի կաւ,  
Կաւի միջին մի զէզ,  
Դէզի միջին մի հասկ,  
Հասկի միջին մի հասիկ,  
Հասիկը զցի անդունդը,  
Ա՛յ, հատ, զու այստեղ յուրն ընկի,  
Ա՛յ, հասկը, դու էլ կայն ընկի:

## Ոմանք էլ այս աղօթքն են ասում.

Օխտը լուծը,  
Օխտը սամի,  
Օխտը սմոտէն,  
Օխտը հետ ասեմ,

Աւքի հետ զերցի,  
Քեզ փրկի.  
Հայր մեր, որ յերկինս...

Թեղնի եարա (րօյա).—Երբ երեսի վրայ մանր ըշտիկ-  
ներ են գուրս գալիս՝ մի դանակ քսելով վէրքին՝ 7 անգամ  
շնչում են հետեւալ աղօթքը.

Բեղո,  
Բեղնիերո,  
Թու գեղն թնչ ա,  
Ահաւ մեղրը,  
Գոգրու 1) ծաղիկը,  
Սառը շաքարը.  
Կը գովեմ, կը գովասանքեմ,  
Ալամ 2) աշխարհքի պիմին կը պահեմ.

### կամ

Բեղնի, բեղնի եարայ,  
Գոգրի ծաղիկ,

Թու գեղն թնչ ա:

—Թամն բողոքը

Բեղնի, բեղնի եարայ,

Թու գեղն թնչ ա:

—Չամիշը,

Բեղնի, բեղնի եարայ,

Թու գեղն թնչ ա:

—Գորտը,

Շեկէկ. (միցրեն).—Երբ զլիի կչսն է ցաւում—շեկէկ  
ունին—հետեւալ աղօթքը գրում են մի թղթի վրայ, եռան-  
կինաձև ծալում և կարում եթէ անամարդ է՝ զլսարկի, իսկ  
եթէ կին՝ զլսարդի մէջ.

Շեկէկը մտաւ խոտի դէղը,  
Երկաթը հէնց կերաւ,  
Մոց որ խոտը՝ եղը,  
Առաւօտեան սուրբ Գէորգի անէժքով  
Վե կաց, գուրս ել, շեկէկ:

Գորտնուկ, (бородовка).—Կամ ձեռին աղ բռնոծ չը-

1) Դգսմ. 2) Համար.

չնցում են հետևեալ աղօթքը և կամ մի հաւկթի վրայ գլում  
այդ և հինգ կամ եօթը ճանապարհների ընդհարման կէտում  
թաղում.

Լիսինը նոր,  
Գործնուկը չոր,  
Օրթում ռւտեմ,  
Թոք չռւտեմ:  
ԱՇ աղ, գու այսուղ հալուի,  
ԱՇ գործնուկ, գու ըտոի չորացի:

Դէլ-կապ.—Երբ Լօռեցու անասունը կորչում է կամ  
հանգն է մնում, գէլ-կապ անողին զայլի բերանը կապել է  
տալիս, որպէսզի սա շը կարողանայ իւր անասունը ռւտել.  
Պատմում են, թէ շատ անգամներ գէլ-կապ անելուց յետոյ  
զնացել տեսել են՝ որ զայլի կապուած բերանով հանգիստ  
պղղած է ոչխարի մօտ, առանց նրան մի որեէ վնաս հաս-  
ցընելու. Լօռեցին նաև այնքան բարեսիրտ է, որ իւր անա-  
սունը տուն բերելուց յետոյ նոյն գէլ-կապ անողին զայլի բե-  
րանը բանալ է տալիս, որպէսզի խեղճը քաղցածութիւնից շը  
սատակի. Դէլ-կապ անողը հետևեալ աղօթքը եօթը անգամ  
շնչալով եօթը հանգոյց է ձգում տիսրատէնի (տրեխի կապ)  
կամ գուլպի թելի վրայ, որպէսզի ազահ զայլի բերանը կա-  
պուի, կամ կացինը զնում սանդերքի բերանի մէջ, որպէսզի  
զայլի բերանն էլ սուր դրուի, և կամ մոխրով լի գդալը դը-  
նում է պատի մէջ, որպէսզի զայլի ացերն էլ մօխրիր լցուի  
և շը տեսնէ անասունին:

Դայլի բերանը բանալիս առանց մի որեէ աղօթք ասե-  
լու արձակում են հանգոյցները, վերցնում կացինը սանդերքի  
բերանից և գդալի միջից մոխրիրը դէն ածում.

Ահա այդ աղօթքը.

Դիր անեմ, գէլ-կապ անեմ,  
Օխտը մատով, օխտը բթով,  
Աստուածածնայ քաղցր կաթով,  
Լուսաւորչի սուրը աշով,  
Գէլի դունչը կապեմ,

Փոքը ցիկ 1) անեմ,  
Ուսները ծղի 2) անեմ,  
Արտամեխն մոմի անեմ,  
Լեզուն արխտըմոր 3) անեմ,  
Սուրբ Սարգսի ձիռ չարը  
Գեամ անեմ, գլուխն անեմ,  
Տանեմ քեօթկիցը 4) կապեմ:

Սրտամնայ.—Երբ մինը վատ է զգում իրեն և ախորժակ չի ունենում, կարծում են թէ մի որեէ բանից զարշել է սրտամնայ է եղել: Եւ որպէսզի ստուգեն իրենց ենթադրութիւնը՝ զիմում են սրտամնայի ազօթքը իմացողին և սա չըրգի լի մի թասի մէջ մի ասեղ է ձգում, աչ ցուցամատը դընում վերան և հետևեալ ազօթքը եօթը անզամ կրինելուց յետոյ բարձրացնում է ցուցամատը, եթէ ասեղը կպած լինի մատին՝ նշանակում է, որ սրտամնայ է եղած:

### Ահա այդ ազօթքը.

Սիստակ սարի տակիցը,  
Սիստակ Ռէհաննէս գուրս եկաւ,  
Սիստակ ջուրը մտաւ,  
Սիստակ ձեռը տարաւ,  
Սիստակ ձուկը հանեց,  
Անձեռը բանեց,  
Անձմանակ մորթեց,  
Անկրակ խորովեց,  
Անիշտան կերաւ,  
Ստատաժուն ելաւ,

Երբ այսպէս որոշում են, որ հիւանդութիւնը սրտամնայ է, մի քանի առաւօտ հետեհալ ազօթքը շնչարով մի գաւած սառը ջրի վրայ մի քիչ շաղ են տալիս երեսին, մնացածը խմեցնում, խորհուրդ տալով, որ թթու բաներ ուտի, և զրունի զլուկին բարձր բռնած:

### Ահա ազօթքը.

Աթլաս,  
Բաթլաս,

1) Ցեկից 2) ծղուեայ 3) բթիմոր, խոշ. 4) կռնզից,

Թալաչբաշ,  
Կարմիր քրեգան,  
Լիքը կուժ:

Եղիշնջ կամ սանջու. — Երբ մինի փորը ցաւում է, աղօթով պատռը մի պոչիկ գդալ ձեռին ցաւոս տեղերը սեղմելով աղօթում է շնչալով հետևեալ աղօթքը և պատռիրում թթու թան խմացնել. \*)

Խքը սուրբ,  
Տեղը մատքը,  
Թթու թան,  
Պոչիկ գդալ,  
Պատ խոն.  
Ով սուրբ Աստուածածին,  
Դու կարես (այս ինչի) սանջուն:

Խիթք. — Այսպէս է կոչում մրսելուց յառաջացած այն հիւանդութիւնը, որի ժամանակ մէջքի և ուսերի մէջ զոնուող երակները կապտում են. թժկելու յուսով արորում են այդ երակները՝ շնչալով այս աղօթքը.

Խիթք խթքեց,  
Քրիստոսը վեր եկաւ խաչակնքեց,  
Որ չէր խաչակնքէ  
Խիթքը մարդ կ'սպանէր.  
Քրիստոս բանեց կանեփէ թոկը,  
Եկաւ առաւ լուսաւորչու աջը:

Ծամանի (կենդանիների բօյա) Մի արծաթէ դրամ

\*) Աղօթողները այս աղօթքն յառաջանալու պատճառն այսպէս են բացատրում. Մի անգամ, երբ Քրիստոս անցնում էր մի աղքատիկ գիւղով, մի գիւղացի հրաւիրում է նրան իւր տուն, մի պրատ (կոտրուած) խան (ցորեն չափելու աման) զնում վերան նասելու և մի պոչիկ (պոչը կոտրուած) գդալ ձգելով թթու թանի մէջ առաջարկում ուտելի Քրիստոս սիրով ընդունում է այդ աղքատիկ, բայց սրտանց հիւրասիրութիւնը, և երբ տեմնում է, որ դրա երեխան տանջուում է փորացաւով, աղօթում է նրան վերոյիշեալ աղօթքը հնարելով և աներեւոյթանում է: Այսուհետեւ թթու թանն ու պոչիկ գդալով մասսաժը վերոյիշեալ աղօթքի հետ համարում է փորացաւը կարելու ամենալաւ միջոց:

գնելով վէրջի վրայ կամ քսելով նրա շուրջը և կամ դանակով խաշտինբելով եօյն անգամ առում են այս աղօթքը.

Աթլաս,

Պաթլաս,

Ալալարս

Բաս բաս,

**ՄՇՆԱԹԱՄԾ.—Մի թղթի վրայ գրում են հետևեալը և զնում մկնատամի վրայ.—**

Ամօն ամօն, յաշլ ամօն չն չն ամօն բրայ բռն, բրայ բռն ամօն:—Ըգ, եղ արգ. գատագ, ագ, ագ, եղէցն:

Սյս գրում են առաւելապէս չորեցարթի և մանաւանդ շիբ-չորեցարթի (Զատիկի Աւադ չորեցարթի) օրը:

Շների յարծակումից ազատումլու համար ասում են.

Յիսուս Քրիստոս աշխարհ եկաւ

Շուն կար՝ զլուխ չկար:

**Օժի խայթոցից ազատումլու համար օձ տեսնելիս ասում են.**

Կորիք անիծեալ, կապեալ լինիս Օհան Օձնեցու առաջի մահ պատարագին:

**Մինի սէրը գրամել ցանկանալով մի փոքրիկ թղթի վրայ գրում են.**

Սուրբ Յարոս,

Սուրբ Ամաթոս,

Սուրբ Սալաթոս,

Սիրեցուցէք (այսինչին այնինչի) հետ:

Ցետոյ եռանկիննածին ծալում են, մի շորի մէջ կարում—  
համայիլ շինում—և միշտ պահում սէրը գրաւել ցանկացողի  
մօտ և կամ մանր կտօրներ ահում, լցնում զրի մէջ և խմաց-  
նում նրան, որի սէրը կամենում են գրաւել.

### ՍՆՈՑԻԱԳԱԾՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Աքաղազը իմաստուն է, նա իմանում է երկնքի զանգակների  
առաջին զարկը և ինքն էլ թեհը թափահարում, ձայն տալիս:

Սև հաւը խեղպում են և դռան շեմքում թաղում, որ չարը  
ներս չմտնի: